ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР
Հասարակական գիտություններ № 5, 1964 Общественные науки

Սա. Մ. Հակոբյան

ԱՐԵՎՄՏՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԸ ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ԻՄՊԵՐԻԱԼԻՍՏՆԵՐԻ ՊԼԱՆՆԵՐՈՒՄ

Արևմտյան Հայաստանը առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին մեծ տերությունների իմպերիալիստական հակասությունների հանգուցակետերից մեկն էր։ Ֆրանսիական մոնոպոլիստների գործակալները, չզիջելով մյուս իմպերիալիստական կառավարությունների գործակալներին, հետևողական պայքար էին մղում Օսմանյան կայսրության այդ հատվածը դարձած Արևմտյան Հայաստանի տնտեսական և քաղաքական նվաճման համար։

Ֆրանսիական կառավարության, մոնոպոլիաների և նրանց գործակալների գործունեության մի քանի հարցերին է նվիրված սույն հոդվածը, հարցեր, որոնք մինչև այժմ գրեթե չեն ուսումնասիրված։

* * *

Արևմտյան Հայաստանում իմպերիալիստական քաղաքականության անմիջական կենսագործողները ֆրանսիական հյուպատոսները և փոխհյուպատոսներն էին։ Ֆրանսիան հյուպատոսություններ ուներ Արևմտյան Հայաստանի խոշոր քաղաքներում՝ Վանում, Էրզրումում, Սվազում, Խարբերդում, Դիարբեքիրում, ինչպես նաև Տրապիզոնում։ Ֆրանսիական հյուպատոսությունները և փոխհյուպատոսությունները ղեկավարում և ուղղություն էին տալիս ֆրանսիական գործակալների բազմակողմանի գործունեությանը։ Հյուպատոսները հաճախ հանդիսանում էին թուրքական վալիների խորհրդատուները, և նրանց վրա ունեին ոչ պաշտոնական զգալի իշխանություն։ «Հարկ չկա ասել,— 1913 թ. օգոստոսի 22-ին հաղորդել են Էրզրումի ռուսական գլխավոր հյուպատոսությունից,— որ այսպիսի պայմաններում ֆրանսիական հյուպատոսների նշանակությունն ու ազդեցությունը շատ մեծ է. անգլիացիների հետ միասին նրանք որոշ չափով հանդիսանում են գեներալ-նահանգապետների խորհրդատուները, ֆրանսիական հյուպատոսների ցուցումների հետ հաշվի են նստում թե՛ թուրքերը, թե՛ հայերը...»[1]։

Բայց պետք է նշել, որ փաստաթղթում վերջին բառերի տակ, ինչպես երևում է նաև նրա բնագրից, հասկացվում էր տեղական կառավարող վերնախավը։ Ինչ վերաբերում է հայկական բնակչության հիմնական մասին, ապա նա ֆրանսիական հյուպատոսներին վերաբերվում էր չթաքցված անբարյացակամությամբ։ Այդ մասին են խոսում հենց նույն ռուսական հյուպատոսություններից ստացված զեկույցները։

Այսպես, Վանի ռուսական փոխհյուպատոսությունից զեկուցել են, որ ֆրանսիական փոխհյուպատոս Պերետի դե լա Ռոկայի և հայկական բնակչու-

---

[1] *Պետական ռազմա-պատմական կենտրոնական արխիվ (ՊՌՊԿԱ), ֆ. 2000 ա., ց. 1, գ. 991, թ. 497։*

թյան միջև հաստատվել են ամենալարված հարաբերություններ[2]։ Դրությունն ավելի վատթարացավ, երբ Պերետի դե լա Ռոկային փոխարինեց Զարզեսկին. «Զարզեսկին չի կարող հաշտվել այն բանի հետ, որ ամրապնդվում է Ռուսաստանի ազդեցությունը։ Սիլը և Զարզեսկին չեն թաքցնում իրենց անբարյացակամությունը դեպի հայերը, որոնք պատասխանում են նրանց լիակատար հակակրանքով... Այդ վերջիվերջո այնպես կատաղեցրեց նրան (Զարզեսկիին— Ս. Հ.), որ սկսեց բացահայտորեն սաստիկ հայհոյել հայերին։ Հայկական թերթերը նշեցին ֆրանսիական փոխհյուպատոսի այդ վարվելակերպը և սկսեցին քննադատել նրա գործողությունները, ինչպես նաև ֆրանսիական կաթոլիկ միսիոներների հասցեին կոպտություններ գրել»[3]։

Այս փաստաթղթում կաթոլիկ միսիոներների մասին հիշատակումը ֆրանսիական փոխհյուպատոսի անվան կողքին, պատահական չէ։ Ֆրանսիական կառավարությունը հսկայական նշանակություն էր տալիս միսիոներական կազմակերպություններին, բարձր էր գնահատում նրանց գործունեությունը, մշտապես և խիստ եռանդով պաշտպանում նրանց «իրավունքները»։ Դրա համար էլ ֆրանսիական հյուպատոսությունները, իմպերիալիզմի քաղաքական ազդեցության տարածման իրենց գործունեության մեջ հենվում էին գլխավորապես կաթոլիկ միսիոներական կազմակերպությունների վրա։ Արևմտյան Հայաստանի բոլոր գլխավոր քաղաքներում կային ֆրանսիական հյուպատոսների հովանավորության տակ գտնվող կաթոլիկ միսիաներ, որոնց բացարձակ նպատակն էր՝ երկրում տարածել ու հաստատել ֆրանսիական ազդեցությունը[4]։ Այդ նպատակով էլ նրանք, բացի Արևմտյան Հայաստանից, հիմնավորվել էին նաև Ադանայում, Մարաշում և Կիլիկիայի մյուս քաղաքներում։ Բայց ֆրանսիական կաթոլիկների գործունեությունը՝ հայերին պրոզելիտիզմի (դավանափոխության) ենթարկելու գործում հանդիպում էր վճռական դիմադրության։ Եվ այդ հասկանալի է։ Չէ՞ որ սեփական հավատից հրաժարվելը թուրքական բռնակալության և մուսուլմանական ֆանատիզմի պայմաններում հավասարազոր էր հայրենիքից և հայրենի ժողովրդից հրաժարվելուն։ Պրոզելիտիզմի նկատմամբ մյուս արևմտահայերի հետ միասին ուժեղ դիմադրություն էին ցույց տալիս նաև Բիթլիսի հայերը, որոնց շրջանում կաթոլիկների ճիզվիտական միսիան հիմնադրվել էր դեռևս 1685 թ.։ Դրան հաջորդած ավելի քան 100 տարվա ընթացքում նրան հաջողվել էր կաթոլիկ դարձնել միայն երեք կամ չորս հայ ընտանիք։ Այնուհետև միսիայի գործունեությունը ակտիվացավ և հայ-կաթոլիկների թիվը Բիթլիսում 1838 թ. հասավ մինչև 15 ընտանիքի կամ 50 մարդու։ Բայց Բիթլիսի հայերը չէին հաշտվում պրոզելիտների հետ։ «Նրանց քահանան գերի էր վերցվել հայ-լուսավորչականների կողմից, որոնք նրան դաժանորեն ծեծել էին Մշո հովտի Սուրբ Կարապետ վանքում»[5]։ Բիթլիսցի հայերի այդպիսի վերաբերմունքի արդյունքը եղավ այն, որ հայ-կաթոլիկների թիվը հետագայում կրճատվեց մինչև 9 ընտանիքի և հայր Ռետորեն 1880 թվականներին նրանց մասին խոսում էր արդեն որպես Բիթլիսի սմենահյուծված ու քայքայված համայնքի[6]։

2 Տե՛ս Վրացական ՍՍՌ կենտրոնական պատմական պետական արխիվ (Վրացական ՍՍՌ ԿՊՊԱ), ֆ. 521, ց. 2, գ. 492, թ. 34։

3 Վրացական ՍՍՌ ԿՊՊԱ, ֆ. 71, ց. 2, գ. 96, թթ. 36—37։

4 ՊՌՊԿԱ, ֆ. 2000 գ., ց. 1, գ. 991, թ. 497։

5 Bore, Corr. et Memoires, Paris, 1840, vol. I, p. 398—399.

6 Տե՛ս Rhetore, Les Missions catholiques, Paris et Lyon, 1881, p. 565—567.

Արատավոր էին կաթոլիկ միսիոներների գործունեության ոչ միայն նպատակները, այլև մեթոդները։ Երբ, օրինակի համար, 1895—1896 թթ. հայկական կոտորածների ժամանակ, ֆրանսիական աշխատավորությունը ուղարկեց իր նպաստները տուժած հայերին, կաթոլիկ միսիոներները չզլացան օգտվել դրանցից։ «Այն ժամանակ, ասվում է արխիվային մի փաստաթղթում, միսիայի պարագլուխն էր դոմինիկյան Հայր Դեֆրանսը, ախտավոր հակումներ ունեցող և փառամոլ մի մարդ։ Նա հասավ իր նպատակին և նշանակվեց հյուպատոսային գործակալ Վանում։ Նպաստի բաժանումը հանձնարարված էր այդ վանականին և կատարվում էր նրա կողմից սոսկ կրոնական պրոպագանդայի նպատակներով կամ հայ կանանց կողմից նրա անհամեստ հակումներին բավարարություն տալու դեպքում։ Կաթոլիկական պրոպագանդան իր ձևերով գարշելի է։ Կաթոլիկները, օրինակ, սիրով խորհում են Թուրքիայի հին ռեժիմի մասին, համոզված լինելով, որ նոր իրադրության դեպքում (նկատի է ունեցվում 1908 թ. երիտասարդ թուրքերի հեղաշրջումը—Ս. Հ.) հայերը չեն փնտրի նրանց հովանավորությունը։ Կորցնելով քրիստոնեության իսկական ոգին, կաթոլիկ միսիոներները հանդես են գալիս որպես նեղ և անհանդուրժելի ֆանատիկոսներ. նրանց սիրային արկածները երբեմն տեղական բնակչության զայրույթն են հարուցում։ Այդ բոլորը, ֆրանսիական հյուպատոսի տարօրինակ, եթե չասենք ավելին, վարվելակերպի հետ միասին, բավականաչափ փափկացրին գոմինիկյանների դրությունը Վանում, զրկելով նրանց նույնիսկ այն մասնակի համակրանքից, որը վայելում էին նրանք»[7]։

«Իրենց անհաջողությունները,—պատմում է այնուհետև արխիվային փաստաթուղթը,—կաթոլիկները վերագրում են բողոքական միսիոներների ինտրիգներին և նրանց նկատմամբ վերաբերվում են չթաքցված զայրույթով ու ատելությամբ»[8]։ Իսկ այդ մի սովորական բան էր։ Չէ՞ որ ամեն մի միսիոներ, լիներ նա կաթոլիկ (ֆրանսիացի), բողոքական (գերմանացի կամ ամերիկացի) կամ թե անգլիկացի (անգլիացի), իր գործունեության գլխավոր նպատակը համարում էր իր իմպերիալիստական երկրի ազդեցության ամրապնդումը Արևմտյան Հայաստանում և դրա համար էլ մշտապես առիթ էր փնտրում, որպեսզի խոշընդոտներ հարուցի մյուսների «նորմալ» գործունեությանը։ Այստեղից էլ առաջանում էր իմպերիալիստական գործակալների փոխադարձ թշնամանքը և ատելությունը միմյանց նկատմամբ։

Բայց և այնպես Արևմտյան Հայաստանում կաթոլիկ միսիաների գործունեության անհաջողությունը բացատրվում էր ոչ թե մյուս եկեղեցիների կամ մյուս պետությունների միսիոներների հակազդեցությամբ, թեև, անշուշտ, այդ էլ որոշ դեր ուներ, այլ, գլխավորապես նրանով, որ կաթոլիկությանը դիմադրում էր հենց ինքը՝ հայ ազգաբնակչությունը։ Այդ հարցի վերաբերյալ կան հետաքրքրական բազմաթիվ փաստեր. ֆրանսիական միսիոներներն իրենց գործունեության հարյուրավոր տարիների ընթացքում կարողացել էին մինչև 1910 թ. Արևմտյան Հայաստանում կաթոլիկ դարձնել միմիայն 20.000 հայի[9],

---

7 Վրացական ՍՍՌ ԿՊՊԱ, ֆ. 521, ց. 2, գ. 492, թ. 170։

8 Նույն տեղում, թ. 172։

9 Տե՛ս Линч, Армения, т. 2, стр. 547. Լինչը վերցնում է այդ թիվը Գոշենից, որը փոխառել է այն հայ-կաթոլիկների պատրիարքից Կոստանդնուպոլսում։

այսինքն՝ Արևմտյան Հայաստանի հայ բնակչության միայն 2 տոկոսը[10] (20.000։1.018.000), իսկ Օսմանյան կայսրության մյուս մասերում, մինչև 1915 թ., նրանց հաջողվել էր կաթոլիկ դարձնել 63,5 հազարի հայի[11], այսինքն՝ կայսրության մնացած հայ ազգաբնակչության միայն 6 տոկոսը (63.500։։1.082.000)։ Արդյունքներն ինչ խոսք մխիթարական չէին ֆրանսիական միսիոներների համար։ «Զրկված լինելով սնղական բնակչության համակրանքից և տեսնելով, որ իրենց պրոպագանդան նրա մեջ ոչ մի հաջողություն չունի, կաթոլիկները վերջերս իրենց ուշադրությունը դարձրին նեստորականների վրա»,—1910 թ. ապրիլի 6-ին հաղորդում էր Վանից ռուսական փոխհյուպատոս Օլֆերևը[12]։ Բայց նեստորականների կամ ավելի պարզ՝ ասորիների մոտ ևս նրանք հաջողության չհասան։

Ֆրանսիական գործակալները Արևմտյան Հայաստանում զբաղվում էին ոչ միայն կրոնա-քաղաքական, այլև տնտեսական գործունեությամբ։ Նրանք հող էին նախապատրաստում Արևմտյան Հայաստանը Ֆրանսիայի կողմից տնտեսապես նվաճելու համար։ Էրզրումի ֆրանսիական փոխհյուպատոսը հայտարարեց, որ «Ֆրանսիան բոլորից ավելի է շահագրգռված Հայաստանի տնտեսական զարգացման մեջ, որ դա Ասիական Թուրքիայի միակ նահանգն է, որը Ֆրանսիան դեռ կարող է տնտեսապես ենթարկել իրեն»[13]։ Արևմտյան Հայաստանի տնտեսական հնարավորությունները վեր հանելու համար ֆրանսիական գործակալները ուշի ուշով ուսումնասիրում էին նրա բնակավայրերը։

1912 թ. հուլիսի 1-ին Օլֆերևը հաղորդում էր. «Ֆրանսիական [illegible]ուպատոսը հուլիսի 6-ին մեկնում է հեռավոր ճանապարհորդության՝ Բիթլիս—Մուշ—Դիարբեքիր—Սղերտ — Մոսուլ — Համադիա — Քոչանիս—Ջուլամերկ—Բաշկալե—Ուրմիա—Սարայ—Վան։ Ճանապարհորդություն կատարելու կարգադրությունը նա ստացել է ուղղակի մինիստրությունից[14]։ «Ֆրանսիացիները ուսումնասիրում են երկրամասը Ֆրանսիայի բազմաթիվ հպատակների օգնությամբ, որոնք ծառայում են «Dette publique»-ում («Օսմանյան հանրային պարտքի» հիմնարկության ցանցում—Ս. Հ.) և «Regie des tabacs»-ում (ֆրանսիական «Ռեժի» ծխախոտային հիմնարկության ցանցում—Ս. Հ.), իբրև տեսուչներ և վերահսկիչներ»,—հաղորդում էր նա 1912 թ. օգոստոսի 8-ին[15]։ Այդ տիպի ֆրանսիական գործակալներից մեկի մասին Օլֆերևը 1911 թ. սեպտեմբերի 27-ին գրում էր. «Վերջերս Ուրմիայի և Շամդինանի կողմից Վան ժամանեց ինժեներ Հրաչյա Մարալը, ծագումով հայ, նա ավարտել է Անգլիայի համալսարաններից մեկի դասընթացը և այժմ ֆրանս-թուրքական բանկի դի-

10 Ինչպես Արևմտյան Հայաստանի, այնպես էլ Օսմանյան կայսրության հայկական բնակչության ընդհանուր թիվը վերցված է Կոստանդնուպոլսի հայ-լուսավորչական պատրիարքարանի տվյալներից (ՀՍՍՌ ԿՊՊԱ, ֆ. 57, գ. 734, թ. 6)։

11 Հայ-կաթոլիկ պատրիարքարանի տվյալների համաձայն 1914 թ. վերջերին հայ-կաթոլիկների ընդհանուր թիվը Օսմանյան կայսրությունում հասնում էր 83,5 հազարի (տե՛ս «Մշակ», 1915, № 18, էջ 4)։ Եթե այդ թվից հանենք Արևմտյան Հայաստանում ապրող 20 հազար հայ-կաթոլիկներին (ընդ որում ենթադրելով, իհարկե, որ 1910 թ. մինչև 1914 թ. վերջիններիս թիվը չէր կարող զգալիորեն փոխվել), ապա կստանանք, որ Օսմանյան կայսրության մյուս մասերում հայ-կաթոլիկների թիվը նախապատերազմյան շրջանում հասնում էր 63,5 հազարի։

12 Վրացական ՍՍՌ ԿՊՊԱ, ֆ. 521, ց. 2, գ. 492, թ. 173։

13 ՊՌՊԿԱ, ֆ. 2000 գ., ց. 1, գ. 991, թ. 499։

14 Վրացական ՍՍՌ ԿՊՊԱ, ֆ. 71, ց. 2, գ. 76, թ. 202։

15 Նույն տեղում, թ. 230։

բեկտորներից մեկն է, ֆրանս-օսմանյան սինդիկատի անդամ և Սամսունի մոտերքում հանքային հարստությունների շահագործման վարիչը։ Այդ ձեռներեց ու կրթված ինժեները, սինդիկատի հանձնարարությամբ այժմ զբաղվում է Փոքր Ասիայի հանքային հարստությունների ուսումնասիրությամբ, որի համար նրան ընկերության (այսինքն սինդիկատի—Ս. Հ.) կողմից բաց է թողնված 1.000.000 ֆրանկ։ Ինժեներ Հրաչյային հաջողվել է հետազոտել որոշ վայրեր, որոնք, նրա ասելով, զարմանալիորեն հարուստ են հանքանյութերով։ Այստեղի լեռներում, հատկապես այն վայրում, որը գտնվում է Հեքիար մարզի և Սոլդուզի միջև, կա բարձր որակի ոսկի. Հրաչյան սիրալիրորեն ցույց տվեց ինձ երկու փոքրիկ կտոր ոսկի, որոնք նա ձեռք էր բերել այդ մարզում։ Նեստորականների հողերը, Հրաչյայի ասելով, արտակարգ հարուստ են հանքաքարերով, այլևս չխոսելով պղնձի և երկաթի մասին... Հրաչյան ասաց ինձ, որ ...առաջին իսկ հնարավորության դեպքում ֆրանս-օսմանյան սինդիկատը կգործադրի իր բոլոր ջանքերը, որպեսզի իրեն վերապահի հանքային հարստությունների շահագործման իրավունքը..., նամանավանդ որ գերմանական, անգլիական և ամերիկյան տարբեր ձեռնարկատերեր արդեն վաղուց համառորեն ձգտում են հաստատվել այս տեղերում... Հրաչյան սեպտեմբերի 22-ին Ռուսաստանի վրայով մեկնեց Սամսուն և ճանապարհին տրամադրված է այցելել Քորցոտ գյուղի շրջակայքը, այնտեղի նավթին ծանոթանալու նպատակով»[16]։

Հրաչյայի նման գործում էին նաև ֆրանսիական մոնոպոլիստական տրեստների և ընկերությունների մյուս ներկայացուցիչները։ Ավելորդ չէ նշել, որ հանքային հարստությունների հետազոտումը, ֆրանսիական մոնոպոլիաների գործակալների կողմից կատարվում էր ոչ միայն Արևմտյան, այլև Արևելյան Հայաստանում։ Հանրահայտ է, որ ֆրանսիական մոնոպոլիստական կապիտալը նախապատերազմյան շրջանում ներխուժել էր նաև Արևելյան Հայաստան և ֆրանսիական ակցիոներական ընկերությունը շահագործում էր Ալավերդու պղնձի հանքերը։ Բայց միայն դրանով չէին բավարարվում ֆրանսիական մոնոպոլիստները։ Նրանք իրենց գործակալներին ուղարկում էին Արևելյան Հայաստանի մյուս մասերում երկրաբանական հետախուզություններ կատարելու համար։ 1909 թ., օրինակ, երկրաբանական ուսումնասիրություններ կատարելու համար Կովկաս էր գործուղվել պ. Բոննեն իր կնոջ հետ, որն սկզբնական աշխատանքի վայր էր ընտրել Երևանի նահանգը։ Հետագա տարիների ընթացքում, մինչև 1914 թ. ներառյալ, «պ. Բոննեն անփոփոխ կերպով ուղևորվում էր Երևանի նահանգ, առավելապես նրա հարավային շրջանները, որտեղ և շարունակում էր կատարել իր աշխատանքները երկրաբանական հետազոտությունների ասպարեզում»[17]։

Ֆրանսիական մոնոպոլիստների համար արդյունաբերական ապրանքների վաճառահանման շահավետ շուկա էր դարձել Արևմտյան Հայաստանը։ Նախապատերազմյան ժամանակաշրջանում Ֆրանսիայից Արևմտյան Հայաստան էր ներմուծվում բրդյա, մետաքսյա, բամբակյա գործվածքներ, մշակված կաշի, ապակի և ապակեղեն, երկաթ, պողպատ, պղինձ և այդ մետաղներից իրեր,

16 Նույն տեղում, գ. 56, թթ. 257—260։

17 Երևանի նահանգապետին գրված Կովկասի փոխարքայի քաղաքացիական գծով օգնական Պետերսոնի 1914 թ. հունիսի 21-ի նամակից։ Հայկական ՍՍՌ ԿՊՊԱ, ֆ. 113, ց. 1, գ. 773, թ. 3։

վուշի քաթաններ, սպիտակեղեն, ֆլանել, թուղթ և գրենական պիտույքներ, կրկնակոշիկներ, կոնյակ և ֆրանսիական արդյունաբերության ուրիշ ապրանքներ։ Իսկ Ֆրանսիան Արևմտյան Հայաստանից արտահանում էր զանազան տեսակի մորթի, ոչխարի բուրդ և այծի աղվամազ, մոմ, ընկույզի քափ, ծիրանի կորիզ, ոչխարի աղիք և այլ գյուղատնտեսական ապրանքներ[18]։ Բայց պետք է նշել, որ չնայած գաղութային առևտրի շահավետությանը, ֆրանսիական մոնոպոլիստներին չէր հաջողվում այն բարձրացնել այնպիսի մակարդակի, ինչպիսին նրանք ցանկանում էին։ Դրա պատճառը անգլիական, գերմանական և ամերիկյան ֆիրմաների կատաղի կոնկուրենցիան էր։ «Ֆրանսիական ֆաբրիկատները,—գրում էր Օլֆերևը,—որոնք մի ժամանակ տարածված էին Փ. Ասիայում, համառորեն դուրս են մղվում տեղական շուկաներից, որոնք լցված են գերմանական և անգլիական ապրանքներով»[19]։

Որպեսզի ավելի լավ շահագործվեն երկրի ուսումնասիրվող հանքային հարստությունները և օտարերկրյա մրցակիցների կողմից նեղված ֆրանսիական առևտուրը նորից դուրս բերվի նրան նախկինում պատկանող առաջնակարգ դիրքերը, ֆրանսիական մոնոպոլիստները որոշեցին կառուցել ճանապարհներ, սկսեցին կազմել նախագծեր, չնայած այն բանին, որ 1900 թ. ռուս-թուրքական համաձայնագրով երկաթուղային շինարարությունը Արևմտյան Հայաստանում կարող էր կատարել միայն Ռուսաստանը։ Բայց երիտասարդ թուրքերը քիչ էին հաշվի նստում 1900 թ. համաձայնագրի հետ, իսկ ֆրանսիացիները նախագծելով այդ ճանապարհների շինարարությունը, առանց իրենց դաշնակից Ռուսաստանի պաշտոնական գիտության ու համաձայնության, ուզում էին ուղղակի վերջինիս կանգնեցնել կատարված փաստի առջև։ Ֆրանսիական պրեմիեր Պուանկարեն, որը 1912 թ. ամռանը եկել էր Պետերբուրգ, Ռուսաստանի արտաքին գործերի մինիստր Սազոնովին ուղղակի հայտարարեց. «Արգելքը, որը դրել է Ռուսաստանը Փոքր Ասիայի հյուսիսային մասում երկաթուղային շինարարության վրա, հակասում է ֆրանսիական շահերին»։ Նա հասկացնել տվեց, որ երկաթուղային շինարարությունը Հյուսիսային Անատոլիայում արդեն լուծված հարց է[20]։

Ռուսաստանը հարկադրված էր զիջել, սակայն այն պայմանով, որ ֆրանսիական երկաթգիծը չանցնի Էրզրումից արևելք։ Պուանկարեն համաձայնվեց այդ բանի հետ երկու նկատառումով։ Առաջինը, նրա համար, որ ֆրանսիական երկաթգիծը սկսվել էր կառուցվել Սինոպից և այն իր ճյուղերի հետ միասին Էրզրում հասցնելու համար պետք էր որոշ ժամանակ, որից հետո միայն կարելի կլիներ մտածել նրա շարունակության մասին՝ Էրզրումից արևելք։ Երկրորդ, երկաթուղու բացակայությունը Էրզրումից արևելք ֆրանսիացիները մտադիր էին առայժմ համակշռել խճուղիների շինարարությամբ։ Այնպես որ Ռուսաստանի վերապահումը Էրզրումի նկատմամբ ֆրանսիացիների համար սկզբնական շրջանում չուներ գործնական նշանակություն։

Բացի Ռուսաստանից ֆրանսիացիներին դիմադրում էին նաև մյուս իմպերիալիստական տերությունները, և ֆրանսիական երկաթուղային շինարա-

18 Վրացական ՍՍՌ ԿՊՊԱ, ֆ. 71, ց. 2, գ. 56, թ. 136, գ. 76, թթ. 137—139, ֆ. 521, ց. 2, գ. 492, թթ. 74—77։

19 Վրացական ՍՍՌ ԿՊՊԱ, ֆ. 521, ց. 2, գ. 492, թ. 57։

20 «Международные отношения в эпоху империализма», сокр. изд., серия III, т. I, примеч. 73, стр. 575.

ության շուրջը Արևմտյան Հայաստանում փաթաթվեց իմպերիալիստական հակասությունների մի ամբողջ կծիկ։ Գործը է՛լ ավելի էր բարդանում նրանով, որ նախատեսված երկաթուղային գծերը, այսպես թե այնպես, մտնում էին Բաղդադի գերմանական երկաթուղու ազդեցության ոլորտի մեջ։ Բայց չնայած բոլոր դժվարություններին և բարդություններին, ֆրանսիական կառավարությանը հաջողվեց հասնել իր նպատակին։ 1914 թ. ապրիլի 11-ին (Ն. տ.) Փարիզում ստորագրվեց ֆրանս-թուրքական համաձայնություն, որով փարիզյան բորսայում թուրքական փոխառության թողարկման և Թուրքիային այլ արտոնություններ տրամադրելու ֆրանսիական կառավարության թույլտվության փոխարեն, թուրքական կառավարությունը, մի շարք այլ զիջումների կողքին ֆրանսիական „Regie generale des chemins de fer et des travaux publics" («Երկաթուղու և հանրային աշխատանքների գլխավոր վարչություն») ձեռնարկատերերին տրամադրեց նաև երկաթուղային կոնցեսիա՝ Արևմտյան Հայաստանում։ Այդ կոնցեսիայի գծերից գլխավորը պետք է լիներ Սվազ—Խարբերդ—Արգանա—Բիթլիս գիծը, որը անցնելու էր համարյա զուգահեռ ռուսական սահմանին, նրանից 320 կմ հեռավորության վրա։ Ոչ պակաս նշանակություն պետք է ունենար նաև Սվազ—Երզնկա—Էրզրում գիծը։ Այդ մայրուղիներից երկու ճյուղ (Սվազ—Սամսուն և Էրզրում—Տրապիզոն) պետք է անցներ դեպի հյուսիս և դուրս գար Սև ծով։ Երրորդ գիծը պետք է անցներ դեպի արևմուտք և դուրս գար Բոսֆորից 96 կմ արևելք[21]։ Նրա հետագա շարունակությանը խանգարում էր Բաղդադի երկաթուղին։ Իսկ այդ երկաթգծի հետ, որի կապիտալ ներդրումների մեջ իրենց բաժինն ունեին նաև ֆրանսիական մոնոպոլիստները, նախագծված կոնցեսիոն գծերը ենթադրվում էր միացնել երկու կետերում՝ Բոլիում և Արգանայում։ Այդ կոնցեսիոն գծերը միացնելով Բաղդադի երկաթուղու հետ, ֆրանսիական մոնոպոլիստները հույս ունեին ավելի էֆեկտիվ շահագործել այդ ուղին։

Բոլշևիկյան «Պրավդան» այդ կապակցությամբ 1913 թ. հուլիսի 27-ին գրում էր. «Բաղդատի երկաթուղուն մասնակցում են (40%) նաև ֆրանսիական բանկիրները, որոնք Փադիշահի միայն ասիական տիրապետություններում, չհաշված թուրքական փոխառությունները, ներդրել են մինչև 360 միլիոն ֆրանկ։ Եվ հիմա նրանք պահանջում են նոր կոնցեսիաներ հայկական հողերում և, ուրեմն, նոր կիլոմետրային ապահովություններ հայկական գյուղացիությունից»[22]։

Արևմտյան Հայաստանի այն շրջաններում, որտեղ այս կամ այն պատճառով երկաթուղի կառուցելն անհնարին էր կամ անշահավետ, ֆրանսիացիները նախագծում էին խճուղային ճանապարհների շինարարություն։ Այդ գործին ձեռնամուխ եղավ ֆրանսիական «Ձեռնարկումների գլխավոր ընկերությունը՝ Օսմանյան կայսրության մեջ» („Socie é general d'eutreprises dans l'Empire Ottoman")։ Նա իրավունք ստացավ Օսմանյան կայսրությունում 9.000 կիլոմետր խճուղիներ կառուցելու[23]։ «Օգոստոսի 10-ի ընդարձակ շրջաբերականով ֆրանսիական կառավարությունը ծանուցեց Վանի իր փոխհյուպատոսին,—գրում էր Օլֆերևը 1910 թ. սեպտեմբերի 1-ին,—որ օսմանյան կառավարությունը իրավունք է տվել ֆրանսիական սինդիկատին խճուղա-

21 «Новое время», 30 марта и 1 апреля 1914 г., №№ 13667, 13670.

22 «Рабочая правда», 27 июля 1913 г.

23 Վրացական ՍՍՌ ԿՊԱ, ֆ. 71, ց. 2, գ. 91, թթ. 370—371. ֆ. 521, ց. 2, գ. 492, թ. 273.

յին ճանապարհներ կառուցել Փոքր Ասիայում... Դեսպանությունը այդ հարցը դիտում է որպես ֆրանսիական քաղաքականության հսկայական հաջողությունը Թուրքիայում և, ինչպես երևում է, հույս ունի եկվոր ինժեներների և տեխնիկների օգնությամբ ամրապնդել իր քաղաքական ազդեցությունը Փոքր Ասիայում։ Հյուպատոսական ներկայացուցիչներին հանձնարարվում է ցույց տալ ամենալայն աջակցություն նոր խճուղիներ կառուցողներին և հիշել, որ վերջիններիս գործն առաջնակարգ կարևորություն ունեցող խնդիր է Ֆրանսիայի շահերի համար Օսմանյան կայսրության մեջ... Շրջաբերականի համաձայն, ֆրանսիացիներին տրված են այնպիսի իրավունքներ, ծառայողների վերահրսկման և կազմի իմաստով, որ Ֆրանսիայի ազդեցությունը պետք է, անշուշտ, աճի Թուրքիայի այս ընդարձակ գավառներում»[24]։

Ֆրանսիացիները նախատեսում էին խճուղային ճանապարհները կառուցել 4 տարում մասնավորապես հետևյալ ուղղություններով՝ Էրզրում—Տրապիզոն (316 կմ), Էրզրում—Երզնկա (160 կմ), Էրզրում—Բայազետ (210 կմ), Էրզրում—Վան (460 կմ), Էրզրում—Խնուս (90 կմ)[25]։ Հետագայում Էրզրումի ֆրանսիական հյուպատոսը ձեռք բերեց Թուրքական կառավարության համաձայնությունը Էրզրումից Իսպիրի վրայով դեպի Ռիզե լրացուցիչ խճուղի կառուցելու համար[26]։ Ենթադրվում էր Խնուսի գիծը շարունակել մինչև Տիֆլիս և կառուցել Էրզրում—Խարբերդ նոր խճուղի[27]։

Նախագծելով ճանապարհների շինարարությունը Արևմտյան Հայաստանում, ֆրանսիական մոնոպոլիստներն ամենից քիչ էին հաշվի առնում երկրամասի և նրա բնակչության կարիքները։ Նրանց ամենից առաջ հետաքրքրում էր իրենց սեփական շահը. «Տեսեք թե ինչ է կատարվում մեր խճուղային ճանապարհների հետ,—ռուս ժուռնալիստուհի Ա. Տիրկովայի հետ զրուցելիս ասում էր Թուրքական պառլամենտի դեպուտատ Բաստրմաջյանը,—10.000 կմ-նոց խճուղային ճանապարհների շինարարությունը հանձնված է ֆրանսիական ընկերությանը։ Ընկերությունն ինքը բաշխել է այդ կիլոմետրները տարբեր մարզերի մեջ, հաշվի չնստելով երկրամասի պահանջների հետ։ Դրա համար էլ խճուղիները կանցկացվեն ոչ այնտեղ, որտեղ տնտեսական կյանքը կարող է առանձնապես հաջող զարգանալ, այլ այնտեղ, որտեղ այդ շահավետ է կառուցողներին... և ֆրանսիական ինժեներները նշում են ապագա հաղորդակցության ուղիները՝ ելնելով միմիայն իրենց համար ամենաշահավետ պայմաններից։ Այդ ձևով դժվար է բարձրացնել օսմանյան բնակչության տնտեսական կյանքը»։ «Բայց ինչո՞ւ այդ դեպքում ճանապարհները տրված են այդպիսի պայմաններով»,—հարցնում է Տիրկովան։ «Այստեղ նորից նուրբ քաղաքականություն կա օտարերկրացիների հետ,—պատասխանում է Բաստրմաջյանը։—Երբ մի քանի տարի առաջ մեզ պետք էր կնքել մեծ փոխառություն, ֆրանսիական պրեմիեր Կայոն ասաց ֆինանսների մինիստր Ջավիդ-բեյին, որ մենք նրանցից միայն փող ենք ուզում, բայց ոչինչ չենք տալիս։ Այն ժամանակ 2—3 շաբաթվա ընթացքում կազմեցին ակցիոներական ընկերություն և փակ

24 Վրացական ՍՍՌ ԿՊՊԱ, ֆ. 521, ց. 2, գ. 492, թ. 325։
25 Տե՛ս Վրացական ՍՍՌ ԿՊՊԱ, ֆ. 71, ց. 2, գ. 42, թ. 242։
26 Տե՛ս ՊՌՊԿԱ, ֆ. 2000 դ., գ. 991, թ. 498։
27 Տե՛ս Վրացական ՍՍՌ ԿՊՊԱ. ֆ. 71, ց. 2, գ. 91, թթ. 370—371։

աչքերով կոնցեսիա տվեցին նրան։ Բայց մեզ ֆրանսիացիները փող, այնուամենայնիվ, չտվեցին»[28]։

Այդպես էին «Entreprise» ֆիրմայի ներկայացուցիչները ֆրանսիական հյուպատոսական ներկայացուցիչների հետ միասին պայքարում Արևմտյան Հայաստանում ճանապարհային շինարարության բնագավառում Ֆրանսիայի իմպերիալիստական շահերի ամրապնդման համար։ Օգտվելով ֆրանսիական հյուպատոսների աջակցությունից, նույն նպատակով գործում էին Թուրքիայում պետական ծառայության մեջ գտնվող և Օսմանյան բանկում ծառայող ֆրանսիական գործակալները ֆինանսական բնագավառում, «Regie» ընկերության ֆրանսիական գործակալները՝ ծխախոտի մոնոպոլիայի ասպարեզում, «Dette publique»-ի գործակալները՝ օսմանյան հանրային պարտքի հարկերի հավաքման գործում[29]։

Պետք է նշել, որ այդ բոլոր գործերի մեջ զուտ ֆրանսիական գործակալների հետ միասին, ֆրանսիական կառավարությունը օգտագործում էր նաև կոմիվոյաժորներին՝ տեղական բնակչության շարքերից, գլխավորապես հայերից և թուրքերից, որոնք անցել էին ֆրանսիական միսիոներական կամ այլ դպրոցներ, ընդունել էին ֆրանսիական ազդեցությունը և Ֆրանսիայի իմպերիալիստական շահերի տեսակետից ծառայում էին նրան ոչ պակաս, քան իրենք՝ ֆրանսիացիները։ Դրա ակներև օրինակն էր վերոհիշյալ Հրաչյա Մարալը։

Իր իշխանությունը Արևմտյան Հայաստանում է՛լ ավելի ուժեղացնելու և ամրապնդելու համար, ֆրանսիական կառավարությունը ձգտում էր առավել կարևոր ժանդարմական ու ոստիկանական հիմնարկները լցնել իր պաշտոնյաներով։ Այսպես, ֆրանսիական մայոր Անշերին, թուրք երկու սպաների և մեկ քաղաքացիական պաշտոնյայի հետ միասին գլխավորում էր թուրքական ժանդարմական հատուկ տեսչական հանձնաժողովը, որը ղեկավարում էր Արևմտյան Հայաստանի ամբողջ ժանդարմերիայի գործունեությունը[30]։ Ֆրանսիական ժանդարմական աստիճանավորները գլխավորում էին նաև վիլայեթների ժանդարմական վարչությունները։ Վանում, օրինակ, 1910 թ. վերջերից ժանդարմերիայի կազմակերպման և կառավարման հարցերով զբաղվում էր ֆրանսիական կապիտան Շերին[31]։ Ֆրանսիական սպաները կազմակերպեցին տեղական ժանդարմերիան նաև Բիթլիսի և մյուս վիլայեթներում և ղեկավարեցին այն։ Ֆրանսիական ժանդարմական պաշտոնյաների աշխատանքը ստուգելու և այն օպերատիվ կերպով ղեկավարելու համար 1914 թ. սկզբներին Արևմտյան Հայաստանում տեսչական ուղևորություն կատարեց թուրքական ժանդարմերիայի վերակազմության տեսուչ, ֆրանսիական գեներալ Բոմանը, որին Թուրքիայում կոչում էին Բոման-փաշա[32]։

Այդպես էին գործում ֆրանսիական իմպերիալիստները Արևմտյան Հայաստանի տնտեսական և քաղաքական նվաճման ուղղությամբ՝ առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին։

---

28 А. Тыркова, Старая Турция и младотурки, пт-g 1916, стр. 72—73. (Բաստրդմաչյանը 9000 կմ-ի փոխարեն նշում է 10000 կմ—Ս. Հ.)։

29 Տե՛ս ՊՌՊԿԱ, ֆ. 2000 գ., ց. 1, գ. 991, թ. 497։

30 Վրացական ՍՍՌ ԿՊՊԱ, ֆ. 71, ց. 2, գ. 124, թ. 133։

31 Վրացական ՍՍՌ ԿՊՊԱ, ֆ. 521, ց. 2, գ. 492, թ. 216։

32 Տե՛ս «Մշակ», 1914, 25 ապրիլի, № 87, էջ 1։

Իսկ Թուրքիայի՝ ավստրո-գերմանական բլոկի կողմից պատերազմի մեջ մտնելուց հետո, երբ Անտանտայի դիվանագիտության օրակարգում բարձրացավ Թուրքիայի ասիական տիրապետությունների բաժանման հարցը, ֆրանսիական իմպերիալիստները, հենվելով իրենց գործակալների վերը նշված գործունեության վրա, այլ պահանջների հետ միասին, դրսևորեցին նաև իրենց հատուկ ձգտումները Արևմտյան Հայաստանի նկատմամբ։ Հետագայում նրանք հասան այն բանին, որ Անգլիան և Ռուսաստանը ճանաչեցին այդ պահանջները և դրանք վերջնականապես ձևակերպվեցին 1916 թ. ապրիլի 13-ի (26-ի) ֆրանս-ռուսական գաղտնի համաձայնագրի և նույն թվականի մայիսի 9-ի և 16-ի անգլո-ֆրանսիական այսպես կոչված Սայկս-Պիկո գաղտնի պայմանագրի մեջ։ Այդ դիվանագիտական փաստաթղթերի համաձայն, պատերազմի հաջող ավարտվելու դեպքում Ֆրանսիան իրավունք էր ստանալու անեքսիայի ենթարկել արևմտահայկական հողերի մի զգալի մասը՝ Սվազի, Խարբերդի, Դիարբեքիրի վիլայեթները, ինչպես նաև Բիթլիսի վիլայեթի արևմտյան մասը՝ Կիլիկիայի հետ միասին։ Բայց Ֆրանսիան միայն դրանով չբավարարվեց։ Ավելի հեռու գնալով նա պահանջեց, որ իր նախապատերազմյան տնտեսական և քաղաքական ձեռքբերումները Արևմտյան Հայաստանում պահպանվեն նաև երկրի այն մասերում, որոնք, գաղտնի պայմանագրերի համաձայն, պետք է անցնեին Ռուսաստանին (Էրզրումի, Վանի վիլայեթները և Բիթլիսի վիլայեթի մի մասը)։ Գաղտնի պայմանագրերի մեջ այդ մասին ասված է, որ ցարական կառավարությունը համաձայնվում է թույլատրել թուրքական տերիտորիայի Ռուսաստանին զիջված բոլոր մասերում «պահպանել երկաթուղային և այլ կոնցեսիաներ, որոնք օսմանյան կառավարության կողմից տրամադրված են եղել ֆրանսիական քաղաքացիներին», իսկ «ինչ վերաբերում է հիմնարկներին, վարչություններին, կրոնական, դպրոցական, հիվանդանոցային հաստատություններին և այլն, ապա նրանք հետագայում ևս կօգտվեն այն արտոնություններից, որոնցով նրանք ապահովված են եղել մինչև այժմ օսմանյան կառավարության հետ կնքված պայմանագրերով, համաձայնագրերով և կոնտրակտներով»[33]։

Այսպիսով, պատերազմի տարիներին Ֆրանսիան Անգլիայի և Ռուսաստանի հետ կնքված գաղտնի պայմանագրերով ձգտում էր ոչ միայն ամրապնդել, այլև ընդարձակել և ուժեղացնել նախապատերազմյան շրջանում իր ձեռք բերած դիրքերը՝ Արևմտյան Հայաստանում։

Պատերազմի ավարտից հետո Ֆրանսիան չօգտվեց իր ճիգերի պտուղներից, որովհետև Հոկտեմբերյան մեծ ռևոլյուցիան, ինչպես և քեմալական շարժումը, խորտակեցին Անտանտի տերությունների իմպերիալիստական պլանները Մերձավոր Արևելքում։

---

33 «Раздел Азиатской Турции по секретным документам бывшего Министерства Иностранных дел». М., 1924, стр. 185—188.

С. М. Акопян

ЗАПАДНАЯ АРМЕНИЯ В ПЛАНАХ ФРАНЦУЗСКИХ ИМПЕРИАЛИСТОВ

Резюме

Французские империалисты, как и империалисты других держав, стремились упрочить свое экономическое и политическое влияние в Западной Армении. Для этого накануне первой мировой войны они создали там обширную сеть своих агентурных учреждений, среди которых особо выделялись консульские представительства, торговые агенства и католические миссии. Последние старались обратить армян в католичество, подорвать их симпатии к России, расколоть их и обезвредить их национально-освободительные устремления.

Французские агенты усиленно изучали минеральные богатства Западной Армении, выгодно сбывали промышленные товары французских монополий, выкачивали из страны дешевое сельскохозяйственное сырье. И все это в усиленной конкурентной борьбе с агентами других держав. Чтобы одержать верх в этой борьбе французские монополисты решили прибрать к рукам, на концессионных началах, дорожное строительство в Западной Армении. «И теперь требуют они новых концессий на железные дороги в армянских землях и, значит, новых покилометрических гарантий с армянского крестьянства»,—писала по этому поводу в июле 1913 г. «Правда».

Касаясь деятельности французских агентов в Западной Армении, французский вице-консул в Эрзеруме откровенно заявил, что «Франция больше всех заинтересована в экономическом развитии Армении, что это единственная область Азиатской Турции, которую Франция еще может экономически подчинить себе».

С началом войны французские империалисты взяли курс на расширение и укрепление своих предвоенных завоеваний в Западной Армении. В секретных договорах, заключенных с Англией и Россией, французское правительство добилось согласия последних на отторжение (аннексию) в пользу Франции (наряду с другими владениями Османской империи) южной половины Западной Армении; что касается ее северной половины, отходящей по договорам к России, то Франция добилась сохранения там своих довоенных экономических и других приобретений. Но аннексионистские планы французских империалистов в отношении Западной Армении потерпели крах. Их осуществлению помешали Великая Октябрьская социалистическая революция в России и кемалистское движение в Турции.